



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/53502-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-329-28.10.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1767 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆ-
ՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱ-
ՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-329-28.10.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Դեղերի մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մա-
սին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-329-28.10.2019-ԱՍ-011/0)
(այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտարկումները՝

1. Նախագծի 1-ին հոդվածի համաձայն նախատեսվում է «Դեղերի մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածի 23-րդ մասը
լրացնել 7-րդ կետով, որի համաձայն բուժման կուրսի կամ անձնական օգտագործման
նպատակով ֆիզիկական անձանց անունով ներմուծված դեղերի համար գրանցում չի
պահանջվում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ նախագծի 1-ին
հոդվածով առաջարկվող կարգավորումներն արդեն իսկ ամրագրված են օրենքի 21-րդ
հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով, որի համաձայն՝ ներմուծման կամ արտահանման
հավաստագիր չի պահանջվում ֆիզիկական անձանց անունով ներմուծվող դեղերի
համար: Ուստի, գտնում ենք, որ նշված լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ
նախագծի 1-ին հոդվածով նախատեսված դրույթներն օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ
մասի կարգավորման առարկան չեն՝ նկատի ունենալով այն, որ նշված հարաբերու-
թյունները չեն վերաբերում ներմուծվող դեղերի գրանցմանը:

2. Նախագծի 2-րդ հոդվածում հստակեցվում է «ֆիզիկական անձինք» հասկա-
ցության բովանդակությունը, այն է՝ «ֆիզիկական անձինք, սույն օրենքի 21-րդ հոդվածի
7-րդ մասի 1-ին կետին համապատասխան», իսկ նախագծի 3-րդ հոդվածում նշվում է
«օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական
անձանց» մասին: Այդ առումով պարզ չէ՝ նախագծով առաջարկվող կարգավորումը
վերաբերում է «օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամա-
նող ֆիզիկական անձանց», թե ընդհանրապես «ֆիզիկական անձանց»: Նշված դիտո-
ղությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապե-
տության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներից:

3. Համաձայն նախագծի 3-րդ հոդվածի՝ օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի, ինչպես նաև՝ փոխադրողի կողմից կամ միջազգային փոստային փոխադրումներով մեկ ամսվա ընթացքում մեկ անգամից ոչ ավելի հաճախականությամբ ֆիզիկական անձի անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար ներմուծման կամ արտահանման հավաստագիր չի պահանջվում: Իսկ, համաձայն նախագծի 4-րդ հոդվածի, նախատեսված դեղերի ներմուծման կարգն ու քանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ նախատեսված փոփոխությունների նպատակը ԵԱՏՄ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավորումներում փոստային առաքանիներով ֆիզիկական անձանց անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի ներմուծման հետ կապված առկա որոշակի հակասությունները և անհամապատասխանությունները վերացնելն է, քանի որ ֆիզիկական անձը, օտարերկրյա պետություն մեկնելիս և օտարերկրյա պետությունից ժամանելիս, կարող է ներմուծել դեղեր՝ բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով, այնինչ հնարավորություն չունի փոխադրողի կամ միջազգային փոստային առաքումների միջոցով այդ դեղերը ներմուծել: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ, «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն, օտարերկրյա պետություն մեկնող և օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար առանց հավաստագրի գրանցված կամ չգրանցված դեղերի ներմուծման կամ արտահանման թույլատվության կարգն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ն որոշմամբ, որով արդեն իսկ կարգավորված են փոստային առաքանիների միջոցով ֆիզիկական անձանց կողմից դեղեր ձեռք բերելու հետ կապված հարաբերությունները:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

գտնում է, որ ներկայացված նախագծով առաջարկվող հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 22-ի N 202-Ն որոշմամբ, ուստի, առաջարկում ենք նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունում մշակվում է «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների նախագիծ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Նախագծի հեղինակն իր կողմից բարձրացված հարցերին կարող է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվելիք «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկումների շրջանակներում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1767 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-329-28.10.2019-ԱՍ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. նոյեմբերի 28
Երևան



Տ. ԱՎԻՆՅԱՆ

Պ-329-28.10.2019-ԱՍ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (<Օ-86-Ն) օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ մասը լրացնել նոր՝ 7-րդ կետով.

«7) բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց անունով ներմուծված դեղերի համար:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը լրացնել նոր՝ գ. ենթակետով.

«գ. ֆիզիկական անձինք՝ սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետին համապատասխան:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) օտարերկրյա պետություն մեկնող եւ օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի, ինչպես նաեւ փոխադրողի կողմից կամ միջազգային փոստային փոխադրումներով մեկ ամսվա ընթացքում մեկ անգամից ոչ ավելի հաճախականությամբ ֆիզիկական անձի անունով ներմուծվող անձնական օգտագործման դեղերի համար:»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր՝ 1.1 կետով.

«1.1) Սույն մասով նախատեսված դեղերի ներմուծման կարգն ու քանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (<Օ-86-Ն) օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

«Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքի 16-րդ հոդվածը կանոնակարգում է դեղերի գրանցման հետ կապված խնդիրները, որի 23-րդ մասը սահմանում է այն դեպքերը, երբ դեղերի գրանցում չի պահանջվում: Մասը բաղկացած է 6 կետերից, որոնցում առկա չէ բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից ներմուծված դեղերը չգրանցելու իրավասության վերաբերյալ դրույթ:

«Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածք, առանց տվյալ օրենքով նախատեսված մեծածախ իրացման լիցենզիայի առկայության, դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք եւ հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք ունեցող անձանց կամ խմբերը, որոնց թվում նշված չեն բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով դեղեր ներմուծող ֆիզիկական անձինք:

«Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է դեղերի ներմուծման այն դեպքերը, որոնց պարագայում ներմուծման կամ արտահանման հավաստագիր չի պահանջվում: Նշված մասի 1-ին կետի համաձայն՝ այդպիսի հնարավորություն սահմանված է օտարերկրյա պետություն մեկնող եւ օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման դեղերի համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած քանակներով:

ԵԱՏՄ օրենսդրությամբ եւ միջազգային փոստային կազմակերպության ակտերով փոստային առաքումներով դեղերի փոխադրման արգելք սահմանված է թմրանյութերի, դրանց պրեկուրսորների, հոգեներգործուն դեղամիջոցների համար:

ԵԱՏՄ հանձնաժողովի 21.04.2015թ. թիվ 30 որոշմամբ հաստատված՝ ԵԱՏՄ մաքսային տարածք դեղամիջոցների ներմուծման մասին թիվ 21-րդ հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից, որպես անձնական օգտագործման ապրանք դեղերի ներմուծման իրավունքը սահմանափակված չէ ներմուծման եղանակով, (օրինակ պարտադիր սահմանով մեկնող կամ ժամանող անձի անձնական օգտագործման կամ բուժման կուրսով նախատեսված դեղերի համար) եւ այդ պարագայում չի պահանջվում մաքսային մարմնին ներկայացնել տեղեկություններ գրանցված դեղամիջոցների միասնական ռեեստրում գրանցված լինելու կամ թույլատրող փաստաթղթերի մասին:

Ըստ էության՝ առկա է որոշակի հակասություն կամ անհամապատասխանություն փոստային առաքանիներով կամ փոխադրողի կողմից ֆիզիկական անձանց անունով ներմուծվող անձնական օգտագործման ապրանք հանդիսացող դեղերի ներմուծման՝ ԵԱՏՄ եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումներում, քանի որ ըստ «Դեղերի մասին» գործող օրենքի՝ ֆիզիկական անձը օտարերկրյա պետություն մեկնելիս կամ օտարերկրյա պետությունից ժամանելիս հնարավորություն ունի ներմուծելու դեղեր իր բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով՝ կառավարության սահմանված քանակներով, այնինչ հնարավորություն չունի փոխադրողի կամ միջազգային փոստային առաքումների միջոցով իր անունով անձնական օգտագործման նպատակով ներմուծելու դեղեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ նախաձեռնել «Դեղերի մասին» 2016 թվականի մայիսի 17-ին ընդունված (ՀՕ-86-Ն) օրենքում՝ այն ԵԱՏՄ մաքսային օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով: